ԲԱՐԱՔ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ ԹԻՒ Ա. **1870** ՄԱՅԻՍ

ԿՐՕՆԱԿԱՆ

ՅԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

ԴՐՈՒԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՑ

Ընեղ, անսահման, Աստուած էական, անկէտ, անվախճան,
Իսկզբանէ Ոան, առ Աստուած էր Ոան, և Աստուած էր Ոան.
Նոցին սուրբ Հոգի համագոյակից 'ի մի էութեան,
Երից մի բնութիւն, 'ի դէմս երիս՝ մի Երրորդութեան։
Ոայց ոչ յեանութիւն, ոչ յառաջնութիւն, ոչ ա՛ երեք Աստուած,
Այլ միշտ մի Աստուած, և զերթ արեգակն՝ լոյս համատարած.
Միոյն Հայր անուն, երկրորդին Որդի, Հոգին երրորդ անձ՝,
Հայր Որդւոյն պատճառ, և Հոգւոյն բղխման՝ անքննին մտաց։
Երիցս ստեղծող սուրբ Երրորդութիւն, երեք թիւ անձին,
Զոր ինչ Հայր գործէ յերկրի և յերկին՝ նոյն Որդին, Հոգին.
Ո՛չ ինչ է Աշխարհ, յոչընչէ եղեալ, գործք են հրամանին,
Ասաց՝ և եղեն երկինք և երկիր՝ համայն յիւր կարգին։
Լուսոյ զ'ի սկզբան հետ առին զսկիզբն հրեշտակք գոյութեան,
Ի նոյն և աւուր հրեշտակք խաւարին, որպէս վկայք կան.
Եղեն և անէք, էացան 'ի գոյ 'ի նիւթ տարրական,
Յորոց Տէր 'ի հինն եդ տիեզերիս յանքակ միութեան։

Վայելք բիւր 'ի ջուրս ծովու, ցամաքի, էակք անհամար,
Մարդկան առ 'ի պէտս, Արարչին խնամոց ցոյցք անժխտարար.
Յորս յամենեսին զմարդ միայնակ գերազոյն պատուեալ,
Իւր նմանութեան նմա տիպ գծեաց, պատկեր անվթար։

Այսպէս՝ "ամենայն ինչ նովաւ եղև" բովանդակ էակ,
"Զէր առանց նորա ոչ ինչ որ եղև, և ոչ մեք էաք".
Ամէն 'ի նմանէ՝ վայրկեանք և բոպէք, ժամք և ժամանակ,
Աւուրք և ամիսք, յամաց 'ի գումար, նոյն և համայն դարք։

Բարուն Յովհան որդին որոտման՝ զայս որոտաց բան.
Երկինք և երկիր և որ արարածք՝ նովաւ հաստեցան.
Այր երբ կամեցաւ՝ Որդին ներգործեաց, Հոգւով շնչացան,
Կանգնեցան, կացին յոգի կենդանի՝ 'ի կենաց սահման։

Դարուն վեցերորդ Այր ետ ժամանակ յաշխարհի յսկզբան.
Մարդացաւ Որդի 'ի կուսէն ընտրեալ յանախտ ծննդեան.
Օրն իւր ՅԹոռոյ յաջմէ 'ի բարձունս մնաց անբաժան,
Յորմէ անսկիզբն ծնունդ ծոցածին նախ քան զյաւիտեան։

Ընեղն էական խառնէ զմեր բնութիւն յիւրն Աստուածային,
Աստուած կատարեալ, և մարդ կատարեալ, կորոյս ոչ մին զմին.
Եւ ոչ են չփոթ, ոչ երկու բնութիւն, որպէս կարծեցին,
Այլ յերկուց բնութեանց անշփոթ միութիւն, Աստուած կուսածին։

Պահեաց ծնողին անախտ զորովայն, անսերմն յղութիւն,
Ընարատ ծնունդ. այր և անապակ մնաց կուսութիւն.
Դանդի՝ որ ծնաւն, նոյն և յղացաւ 'ի սրբոյ Հոգւոյն.
Օծեալն 'ի Հոգւոյն՝ ընդ Աստուածայնոյն օծ զմեր բնութիւն։

Եկն մեր Փրկիչ, փրկեաց յանիծից մեղացն Ադամեան,
Օվ իւր տիպ պատկերի եդիտ՝ զոր երբեմն 'ի հաղը կորստեան.
Ցուրն 'ի յորդանան յոր մկրտեցաւն, զնոյն կողեցն հոսման.
Կացոյց 'ի լուացումն մեզ 'ի սկզբնական մեղացն եղծման։

Տալով զիւր մարմին մեզ 'ի կերակուր, կեցոյց յաւիտեան,
Եւ զարիւն ելհեղ Հօրն յորդեղրութիւն, մեզ դին փրկութեան.
Օվասէն 'ի պակ ետ նորոյ ուխտիս յաղթութեան նշան.
Ի թև քառաթև դրանց դժոխոց յաւերժ յաղթական։

Էջմիածին Եր+ Գրիգորիոս Աղաբեանց